ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում կրում են ԱԱՀ-ի վճարման պարտավորություն, եթե՝

1) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված՝ արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 40 000 000 ՀՀ դրամը (ԱԱՀ-ի շեմ).

2) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված գործարքներից, բացառությամբ արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքների, և սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 12 000 000 ՀՀ դրամը (ԱԱՀ-ի շեմ):

Սույն մասով սահմանված ԱԱՀ-ի շեմերը չեն տարածվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

կետի «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար որոշվող հարկվող շրջանառության մասով:»:

Հոդված 2. Օրենքի 6.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասը վերջին պարբերությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև ժամկետի լրանալու օրը:».

2) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված հետաձգման ժամկետի լրանալը սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն առաջանում է) մաքսային մարմիններին ներկայացված՝ հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ՝ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, և հայտարարությունում նշված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե ժամկետի հետաձգումը դադարեցնելու օրվանից տասնօրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը և այդ գումարների նկատմամբ հսկողությունն իրականացնում է մաքսային մարմինը: Մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 17-րդ կետից հանել «-բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցումը.» և «-բրոքերային և միջնորդական այլ ծառայություններ.» պարբերությունները.

2) 30-րդ կետում «մինչև 2015 թվականի» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) անցնելու դեպքում հարկվող շրջանառություն է համարվում գրավ դրված գույքի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով որոշվող իրացման գնի և վարկային պարտավորության դրական տաբերությունը:

Սույն հոդվածի իմաստով վարկային պարտավորություն են համարվում գրավ դրված գույքը բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը, այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**